



ԲԱՏԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչտային համար	
Տարեկան	10 Ֆր.
Վեցամսեայ	5 »
Արտասահմանի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Անկերխոյի համար	
Տարեկան	2.0 ռ. ռ.
Վեցամսեայ	1.25 »
ՎԱՆԻՍԻՒՆՆԵՐԸ	

Մանուկներու տարրական կրթական համար 40 սանթրիմ է. իսկ վերջին կրթական համար 20 սանթրիմ է. կրթական տեսիլ սակարկելու համար 20 ՕՐ. գեղջ կը ըլլայ:

**ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ**

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նախակ եւ դրամ դրկել  
կըրպարութեան հասցեին

Редакция на вестникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ լեզու տրուի

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

**ՇԱՐՋՈՒՄԻ 1900Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Փետրուար 1ին կսկսի «Շարժում»-ի երրորդ տարեշրջանը հետեւեալ պայմաններով:

Պոչտային համար տարեկան	12 Ֆր.
» » վեցամսեայ	6 »
Արտասահմանի համար տարեկան	15 »
» » վեցամսեայ	8 »
Անկերխոյի համար տարեկան	3 ռուբլ.
» » վեցամսեայ	1.50 »
Պոչտային համար մեղքի 15 սանթրիմ	
Արտասահմանի » »	20 »

Քառասունը կանխիկ են:  
Ամէն բաժանորդ իր հասցեին հետ մէկտեղ պէտք է բաժանագինը զրկէ. սպա թէ ոչ «Շարժում» չի զրկուի:

Մեր գործակալներէն կը խնդրուի հաղորդել մեզ չը վճարող բաժանորդներուն անունները, որպէս զի այդ մարդոց թերթերը դադարեցնենք:

**ՄԵՐ ԲԱՏԱՆՈՐԿՆԵՐՈՒՆ**

«Շարժում»-ի երկրորդ տարեշրջանը աւարտուելու մէկ ամիս մնաց. մեր այն ամէն բաժանորդները որոնք մինչեւ հիմա չեն վճարած. թող բարեհաճին զըրկել իրենց բաժանագինները:

Փետրուարի 1ին պիտի սկսի երրորդ տարեշրջանը. նախորդ տարուան պարտքերը չը վճարողին «Շարժում» չը պիտի զրկուի: Փետրուարին պիտի յայտարարուին նաեւ յոյս աշին բաժանորդները եւ գործակալներու անունները, որոնք խիզը ունին հայ թերթի մը վարձքը ուտելու:

**ՆԱՍՏԱՆԱԿՆԵՐԸ**

Սօֆիա, Պ. Ա. Փ. — Չեր զրկուած բարձր ստացանք. անցեալ բաժանագիրը եւ նոր տարուանը խմբագրութեանս զրկեցէք:

Պոչտէջ, Պ. Ա. Փ. — Կը խնդրենք շտապեցէք բաժանագինները զրկել եւ չը վճարող բաժանորդներու անունները:

**ՄԵՐ ԲԱՂԱՔԱՎԱՆՆԵՐԸ**

Ան ուրիշ անկիւն մը մեր յարատանը հայրենիքին ճշմարիտ զուգապատկերը ներկայացնող, միեւնոյն ճիւղային կառավարութեան լուծին ներքեւ. Մակեդոնիան, որ նոյնպէս կողոպուտը, բռնարարութիւնը և սպանութիւնը օրէնքներու կարգը դատուած են:

Սուլթան Համիտ, Եւրոպայի դիւանագէտներու այդ «երես առած» հրէջը հաւասար կատաղութեամբ և անդթութեամբ իր հպատակները կը շարժարէ:

Այս մեծ հրէջը, որ իր հպատակներուն ինչքն ու արիւնը կը ծծէ՝ ունի և ուրիշ բարեբարութեամբ հրէջներ քիւրտեր ու ալպանացիներ, որոնք իրենց պետի խորթուրդին հաւատարիմ պահակները են: Եւ ի վարձատրութիւն այդ պահակներուն քիւրտին և ալպանացիին թող ստուած է քրիստոնեան կողոպտել ու սպանել, ասոնց արդար պահանջներու փոխարէն Հայաստանի և Մակեդոնիայի մէջ:

Հայաստանի մէջ վայրագ քիւրտն է հայուն մահացութիւնները, իսկ այստեղ ուրիշ նոստակալան ցեղ մը, գաղան ու ապերասուն ալպանացիներ, խեղճ Մակեդոնիոյ պատուհասը:

Պոլսոյ հեռագիրները երբեմն փոքրիկ անկարգութիւններու (.) լուրեր կը բերէին Գոսմի ափերէն ու ժայռոտ Տէպուէի հովիտներէն, որ գարեբով իրեն անկախութիւնը անվանող պահպանած է ալպանացիներու էն հուժկու և գաղանարարոյ ցեղը ասոնք մինչեւ հիմա միայն թուրքիոյ անուանական հպատակը եղած են:

Անցեալ գարունը ասոնց պետերը ալպանացի ուրիշ նշանաւոր պէյերու հետ Իբէքի մէջ ժողով գումարելով ամենատարակարգութեամբ «գործ» պահանջեցին, որ իրենց լեզուով թալանելու սպանել կը նշանակէ: Թիւրք կառավարութիւնը

վարցած իր գաղաններու բացարձակ յայտարարութիւններէն կաշառքով և կեղծ խոստումներով, (որովհետեւ բունութեամբ անկարող է) զանոնք համոզեց հանդարտ մնալ իրենց այդ բարի դիտարութիւնները ուսկի նպատակը հանգամանքներու մէջ զոյժադրելու համար: Գոսուլ ալպանացիները դժուարաւ համակերպեցան, միայն ժամանակամիջոց մը որոշեցին և մինչեւ այդ օրուան համար հանդիսար «պիտա» տուին:

Այս օրերս այդ խոստման պայմանաժամը լրացած ըլլալով, հրոսակներուն պարագլուխները, իրենց սպառնական երդումները, «պիտա»-ին դէմ մեղանշած չըլլալու համար, սեղական միութեամբ քիւրտներ են:

Սուլթանն ու սարափը իսկոյն կը տիրապետէ քրիստոնեաները, ալպանացի հրոսակները դրօշ պարզած կսկսին իրենց գաղանութիւնները: Բնակիչներու ողբ ու կոծը և աւերակ գիւղերու մուխն ու ծուխը իրար խառնուած երկինք կը բարձրանայ: Անցեալ տարի վերջից, Բուսուսի և Վէլէն աւերեցին ու ջարդեցին, հիմակ ալ կարող Տէպուէն հասած է, որու չը վակայ բոլոր գիւղերը աւերեցին ու կողոպտեցին վերջը, քանի մը հազար զինեալ կատաղի ալպանացիներ քաղաքը կը խուժեն:

Միութեամբ կը դիմադրէ, սակայն անզօր և ահաբեկ զինուորները քրիստոնեաներու տները կը պատուարուին. խոստումներ կը ծագի, ալպանացիները Պոլս կը հեռագրեն որ կատաղութիւնը սակից վերջը իրենց գործերուն չը խառնուի, սպա թէ ոչ Սուլթանն ալ չը պիտի ճանչնան:

Քրիստոնեաները իրենց տուներուն մէջ վախում սորստիվար վերջին ժամուն կսպանեն, փողոցներուն մէջ միայն մարթիրներով զինուած ալպանացիներու անցողաբար կը նկատուի: Ինչ՞ մակեդոնացիներ ստիպուած է թէ իր փոտիշահի անօթի և թուլամորթ զօրքը սնուցանել ու

պատուարել և թէ այս արիւնկղակ անկոչ հիւրերը:

Ասարի և կողոպուտի հաւասար բաժանման համար թաղերը իրարու մէջ բաժնած են. օրինակելի մարդասիրութեամբ կը վարուին իրենց զոհերուն հետ. մէկը իրեն բարիք մը ըրած պուրկարին ըսեր է. «ապահովեղիր, թող չը պիտի սամ որ գլուխք ուրիշի սուրէն ինչայ, իմինս քեզ ցաւ չը պիտի պատճառէ, լաւ որած եմ»:

Մակեդոնացիք ոչ յեղափոխութիւն ըրին, ոչ ցոյց և ոչ ալ մեղ հետ ոտմը նետեցին Պոլսոյ մայրքերու վրայ. սակայն «ոչ պաշտօնական» փոքրիկ ջարդերը անվերջ թալանումները, սպանութիւնները, արհեստական սովը հոն ալ կը տիրեն. իրենց և մեր տուած զոհերու մէջ թուահամարի շատ քիչ տարբերութիւն կայ. ըսածս կը հաստատեն «Բոլիթիչեսքա-Սլոպոսա» «Պոսպա» և «Բէֆօրմ» թերթերը, որոնց վրայ կը հրաւիրեմ մեր Լօնտօնի և Փարիզի «անկեղծ» քննադատներու ու շարքութիւնը:

Սօֆիա Թ. Ղ. Ա. Կ. Ի. Ը.

**Ա. Չ. Գ.**

Աղգային երկուսն վարժարանաց բացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ երկուշաբթի, Յունվար 17, թաղապետութեան երկրորդ հրահանգին համաձայն: Ամէն անոնք որ վարժարանիս աշակերտ ու աշակերտուհի տալ կուզեն, թող փութան վաղուց սկսեալ իրենց զուակաց անունները հոգաբարձութեանս ընդունելութեան սոմարին մէջ արձանագրել տալու:

Ի դիմաց Հոգաբարձութեան Ատենագիր Ատենապետ Գ. Կիւրպիսեան Յ. Մ. Թովմասեան Վառնա, 11 Յունվ. 1900

(—)(—)

ՓԱՐԻԶԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԸ

Նսար-Բեկի Հնչակեան կուսակցութիւնը կազմելու մի ուժ. — Հայ ժողովրդական երգերու հաւաքածոն. — Զօպանեանի հոյակապ նկարները. — Արշակ Բ ի ներկայացումն ի Փարիզ. — Փարիզի նոր հողաւոր հովիւք. — Աճարժուօի կրչիւն մեր պատասխանը:

Անցեալները, հոս. Հնչակեանները ժողով կը գումարեն ու կը խորհրդակցին նազար-Բեկի տապալուած կուսակցութիւնը վերակազմելու: Երաւի չէ որ այս պարտները սակաւ չը շրջանցին թէ ազգի մը բազմին հետ խաղցող այդպիսի համարմամբ մը, բռնազրօսիկ ճիշդութիւն որ պիտի կազմուի: Ժողովին մասնակցած են սասնեակ մը մարդիկ. մին «կախարանին տակէն կուզամ» կը պոռայ միշտ օգին մէջ. ուրիշ մը հայրենասիր եւ սգոսիր երեւի կուզէ չոր ազմուկ հանելով. երրորդ մը, չորրորդ մը բազմէն ու մարդոցմէ հայածեալներ անապատութիւններ կուզեն զգուհի, ա՛յ ես ի՞նչ գիտնամ: Ինչպէս կը թուի, կուսակցամտութիւնէ մազնիւտացած այդ պարտները կուզեն ինքզինքնին ցոյց առնել. թէ՛ եթէ իրենց կուսակցութեան գոյութիւնը մոռցուած է Մայր-Երկրին մէջ, սակայն իրենք կը յեղափոխեն ու գոյութիւնն իր պահպանեն, ուր—արտասահմանի մէջ: Յեղափոխութիւնը, ինքզ ընդհանրեաներ, հայրենիքի մէջ միայն կրնայ գոյութիւն ունենայ. սակայն, իմաստաւ լաւ ըմբռնեցէ՛ք:

Պ. Եղիազարեան հայ ժողովրդական երգեր կը հրատարակէ կամ տւելի ճիշդը հրատարակելու ելեր է: Հայ թերթերու մեծամասնութիւնը յայտարարեց թէ արդէն այդ երգերի առաջին գիրքն հրատարակուի (°) ալ է. սակից գրեթէ մէկ ու կէս ամիս

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

ԳՐՈՏԻՈՒՍ ԳԻՆՈՒՆԻՆ ԾՆՈՒՆԵՐ (°)

Իր պատաւ ազախին Մարիանը ճամբելէ ետքը՝ Գրոտիուս գիտունը հնարուց բարձաթոռի մը վրայ տեղադրուեցաւ. իր կողերը սեւցած ծխափայտը վառեց եւ լապտերին տակ հակած՝ վերակառ թաղանթաթեւ միջաստեղծ վրայ իր մեծ գործին, զոր կէս դար առաջ սկսած էր:

Լաւ անցուած կեանք մըն էր Գրոտիուսինը. կեանք մը աշխատանքի եւ բարի գործերու. զոր երբէք չէր նսեմած ամենաթեթեւ թերացում մը. կեանք մը զուտ անշահախնդրութեան, նուիրուած ճամբարութեան խուզարկումին: Խորին ծերութեան հասած, — իննուսունըհինգ տարիքը լրացուցած էր — Գրոտիուս, այն առանձնաշնորհութիւնն մէկով, զոր գիտութիւնը իր ջերմաստիճաններուն կը շնորհէ. արեւոր գլխուն տակ երիտասարդ սիրտ մը կը սնուցանէր:

(°) Ճամբաները փակուած ըլլալուն պատճառաւ յօդուածը մեզ ոչ հասաւ. եւ այդ պատճառով Միւսնիկ համարի մէջ չի կրցինք հրատարակել:

Մ. Խ.

տասն, անբոխիկ ճամբարի մը, Միլիթ Մարգիս Գաւիթ պէյի մը, սուսած լիտա տեղեկութիւններէն ազգուած: Հաւատացած եղէ՛ք. որ եղիազարեան անկողնով է ասանկ գործ մը զլուխ բերելու: Հանրածանօթ բարեգործ Պ. Առաքիլ Մատուրեանի այդ գործին համար յանձն առած ճախքերու հոգայն (ինչպէս յայտարարեցին ժամանակին) որ եւ է արդէն քաջաբար ունենայ, յանի որ եղիազարեանի նման մէկն է այդքան կայեւոր գործի մը զլուխ անդնողը: Յունվարին վերջն ալ լոյս չը պիտի տեսնէ, հաւատարմութիւնն ունէր հոգեմեծութիւնն զիբուեթիւն ունէր հոգեմեծութիւնն իր յոյս տեսնելու, հաւատարի աղբիւրներէ լաւացած մեր տեղեկութիւններուն նայելով, կը կասկածի զոր այս օգտաշատ գործն ալ վիժի, ու մեզ համար սարսրեանկ չը պիտի լինէր այդ բանը քանի որ արդէն մեզի խիստ մեծ գործունք պատճառեց, երբ իմացանք թէ եղիազարեան այդ տեսակ հրատարակումի խորհուրդ մը յղացած է: Հաւատարի ենք որ այդ մտածում իրը չէ:

Զօպանեան՝ Շարժումի վահագնին պատասխանել փորձեր է, իր բաժակածառը սպելով, Զօպանեան ասով ինքնիրեն վերստին գատապարտելու ելած է. ինքզ իրենք, անձնագրով իրեն եւ հայհոյանք, ահաւստի իրեն արդարացումի բոլոր պատշաճը: Չերպիլի գէ՛մ հայհոյանքը իրով զինուած է, ու իրաւամբ Զօպանեան զխել կուտայ թէ ինչո՞ւ Չերպիլ չէ բարեհաճած հայրէն լեզուաւ տպել ալ իր գրածները, ու աւելի լաւ կերպով խայտառակել Զօպան-Արփիարակեան զեղծումներն ու դատանցանքները: Պ. Չերպիլ լաւ կրնէր որ իր այդքան լոյսասփիւռ փաստերը հայերէն թերթերու մէջ ալ երբեմն հրատարակութեան տար:

Պարզ ինչպէս բոլոր ճշմարիտ գիտունները, ան կախատէր այնպէս ինչպէս երիտասարդութեան ատեն, մարդկութեան քանձարանը հարստացնելու: Սրտայոյզ տեսարան մըն էր տեսնել այս աշխոյժ ծերունիին Սէգուրի ծառուղիի իր վեց յարկերէն վեր մագլիւղ (իւր աղբարութիւնը իրեն արգելելով շատ բարձր տան վարձքի մը պերճանքը) Սորպոնի մէջ դասախօսութիւնէ մը վերադառնալուն, որուն ոչ մէկ ատեն չէր թերանար հակառակ ցուրտին, անձրեւին, ձիւնին: Պարզութիւն, սակաւապետութիւն, աշխատութիւն, կրնար արձանագրել Գրոտիուս իր գիտնանքին վրայ, եթէ ունեցած ըլլար իր համեստութիւնը ապահով վարար պիտի արգելէր իրեն հոն կցելու եւ բարութիւն:

Եւ առանց ներքին կուռի մը չէր, որ մեր պատուական մարդը իր սովորութիւններէն խոտորելով տունը կը մնար այս խթումի իրիկունը: Անձանօթ յոգնածութիւն մը, քիչ մը ծուլութիւն թերեւս, կամ անբացատրելի նեղութիւն մը արգելք եղած էր Գրոտիուսին նախագահելու այն խնձոյթին, զոր ան ամէն տարի ինքզ իրեն կուտար, վարը՝ Կօմիարի խորը. ողորմաւբ հոգիի մը կողմէ վարձուած ընդարձակ սրահի մը մէջ: Առանց սրտի մեծ ճնշումի մը չէր որ ան գրած էր հա-

Պ. Պէնչեան անցած գիշեր, 2 Յունվար, Արշակ Բ. Ներկայացուց հոսարու հասարակներէ կազմուած խումբը քիչ յաջողութիւն գտաւ: Գ. Թապալեան, թէեւ իր շարժումներու մէջ փոքր ի շատէ ծայրայեղ եւ անբնական, իր գերը բաւականին լաւ խաղաց: Պ. Պէնչեան թէեւ վարժ գերասանի երեւոյթն ունէր սակայն իր գերին կամ աէրը չէր, եւ կամ, ինչ որ աւելի հաւանական է, զայն լաւ պատրաստած չէր. սակայն կը յուսանք որ օր մը աւելի լաւ յաջողութիւն ունենայ:

Բամբաստութի թատրոնին մէջ, որ այս ներկայացումը արուեցաւ, հազիւ հարիւրի չափ հանդիսական կարՓարիզարեանկ հայերը հոս ալ իրենց անսարքերութեամբ կը փայլէին:

Տ. Վոսաճապուհ քննչ. Գրպարեանը լաւ սպաւորութեան տակ կը թողուիրեն այցելողները, կը մաղթէինք որ իր գործունէութեան մէջ ալ այդ սպաւորութիւնը թողուր: Հետու պահել ինքզ ինք շողորթութիւնը ազգեցութիւնէն, ունենալ անաչառ եւ անկախ ոգի, չը պատկանի որ եւ է կուսակցութեան. ահաւստի ինչ եւ ինչպէս պէտք է լինի Փարիզի նոր Հոգեւոր Հովիտի գործունէութեան ձեւը:

Շարժում իր Փարիզի բարեկամներէն տեղեկութիւն ուզած էր թէ ո՞վ է Պ. Իսկէնտէր եւ ինչ է «Հայկական Յեղափոխական Միութիւն» կոչուածը որ Պոլսէն արտասահմանի հայերուն կը գիտէ յեղափոխական բանասիրեալներու օգտին գրամ հաւաքելու: Պ. Իսկէնտէր ոչ լաւ տպաւորութիւն եւ ոչ ալ խիստ զէջ տպաւորութիւն թողած է մեր վրայ: Միայն սաչափը ճշմարիտ է որ Զօպանեանի չափէն տւելի մտերմութիւն ցոյց կուտայ. այնպէս որ ինչպէս Անահիտի վերջին համարին մէջ ալ պիտի տեսնէք.

Լատարիմ Մարիանին տարած հեռագիրը, ինքզ ինքը արգարացնելու իր սիրելի աղքատներուն նկատմամբ իր յարգանքի պակասին համար, Բայց բնականաբար սաք էր, մեծ կոճղ մը, կնոջ քնքար հոգածութիւն—կը բոցավառէր վատարանին մէջ, Գուրը չոր ցուրտ մը բերեղնէր կը կախէր տանիքներու եզերքը. հիւսիսի քամին ծառուղիին մերկ ծառերը կը ցնցէր, եւ եղեմատ երկնքին մէջ սոճուած աստղերը մեկտու իրար կը սեղմէին. ծերուկ ձմրան խածուածքներէն խուսափելու համար: Օձիքները վեր բարձրացուցած՝ անցորդները քայլերնին կը փութայնէին: Մեծ քաղաքը լոյսերու մէջ կը շողար, ուրախ խփիւն մը կը բարձրանար, ազգարարը սպաւորած գարթօնքին: Ի՞նչ լաւ խթում:

Գրոտիուս, զոր աշխատութիւնը կը տաղտկացնէր այն իրիկունը, լուսամտութիւն մտնեցած էր, իր աչքերուն պարզուած նորօրինակ տեսարանէն հմայուած: Փարիզը կը տարածուէր իր սովել, Փարիզ մը, որուն հորիզոնը Սէն-Գլուի լուսնակ գեղեցուան մէջ ստուերաւորուած բլուրները կը կրկնէին. Փարիզ մը խոշոր քարերու կոյտերուն մէջ թանձրացած, ուր պայծառ լուսինը սպիտակութիւններ կը գնէր սիրապետող խաւարին մէջ. զիտութեան եւ հանձոյթի Փարիզը, որ կը պատ-

միասին կազմած են կամ աւելի լաւ կը թուին կազմել, Հայրենասիրական անունին տակ (նոր է ասիկա, թէ՛ ժամանակին գոյութիւն ունեցողն է, ասի չեմք գիտեր), որուն նախագահն է միւսնայն իսկէնտէրը եւ ասեանագիրը Զօպանեանը: Ամէն ճշմարիտ հայու պարտքն է ստուգել թէ ո՞վ է այդ «Հայկական Յեղափոխական Միութիւն» բուսածը եւ հիմնողը. մի գուցէ՛ Զօպան-Արփիարական նոր խաղ մը լինի ասիկա, նոր ձեւով մը գրամ կորցնելու համար. որովհետեւ միւսնայն ամէն ոք այդ տեսակ գոմիթի մը գոյութիւնը կանգիտանար՝ Զօպանեան (իբր Բիկո Գրիգորի յօդուածէն քաղուածք մը, թէեւ հոգ չէ ինքը ըլլայ այդ բանին անոր լրատուն) իր՝ թերթին մէջ, ասկէ քանի մը ամիսներ առաջ զայն կը հոչակէր. ու վերջերս ալ 10 ֆր. կը ստորագրէ այդ գոմիթին նուիրատուութեան ցուցակին մէջ:

Կը կասկածինք, ԳԱՌՆԻՃ Փարիզ, 17 Յունվար

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱԻՐԻՉ, 25 Դեկտ.

Ահա գալիս եմ անելու մեր նախորդ յօդուածի մէջ յիշած յայտնութիւնները միմիայն հասարակութեան օգուտը եւ շահը աչքի տուալ ունենալով. թող վարչութիւնը մի անգամ ինքնիրան ամփոփէ եւ տեսնի թէ ո՞րքան սխալ քայլեր է արել, անհակած՝ ի մեծ վնաս հայ հասարակութեան եւ մանաւանջ կրթական գործին:

Այս յայտնութիւնները յետոյ երկու բան է մտում անելու. կամ վարչութիւնը իրա այս սխալ ընթացքը խոտովանելով հրաժարելու է, կամ իրա ուղղութիւնը զէջի օգտաւարը փոխելու եւ կամ թէ թաւրիկի հասկացող պաւակարգը միւսնայն արդիւնքը ձեռք բերելու համար ամէն կարելի միջոց գործ է դնելու: Այս

բաստուէր Գալիլեյի հեղ Յեղափոխականին տարեգարձը տօնելու:

Ու Գրոտիուս կերեւակայէր ինքզ ինքը բոլորովին մանուկ, ընտանեկան զիւրարեան հաւաքումներուն, երբ պատաւ մամը, սարքէն ճաթած ձայնով մը՝ կը կարգար Միւսնայնի գիրքը. իչուն ու եզին համար պաշտուածը եւ ինքզ ինք մտուրին մէջ ժամանումը փայլուն աստղէն առաջնորդուած թագաւոր մոգերուն: Սորոհ՝ ուր զվաղմի աւանդութիւններու, Յուդայի մանուկը կերպարանափոխ ըրած էր աշխարհը:

Բարի գիտունը կը խորհրդածէր: Այս սրտայոյզ պատմութիւնները իրենց միամտութեանը մէջ իր աչքերուն արտաքոյ կարգի թարմութիւնը կը պահէին, տղայական ինչպէս բոլոր երեւակայութիւնները պարզամիտներուն եւ խորին միանգամայն, մինչեւ իմաստութեան աստիճան. իմաստութիւնը բաժին չինկաւ անոնց, որոնք խոնարհ են մտքով ու սրտով:

Գրոտիուս գուարթ, հոգին խաղաղ կը դիտէր անհուն դաշտանկարքարթուն երկնքին տակ քնացած երկիրը: Մտալ մը կը պլպլար անհամեստելի փայլով մը, աւելի գեղեցիկ քան իր քոյրերը, վճիտ, շողշողուն, մաքուր սասղ մը, Յունկարձ՝ արդեօք յոգնութեան արդիւնք էր՝ իրեն թուեցաւ թէ աստ՝

անհրաժեշտ է հասարակութեան օգուտը ի նկատի ունենալով. հակառակ դեպքում վնասվելու է կրթական գործը. վնասվելու է նոյնիսկ այս րնկերութիւնը, ինչպէս արդէն փաստերը ցոյց են տալիս նոյն բանը. որք տեղի է ունենում մեր աշխարհում:

Այժմ սկսենք թելել մի առ մի կատարված ապօրինութիւններն ու զիջումները:

Ա. Ապօրինի չէ՞ր պակաս անդամով վարչութեան գործերը, քանի որ օրինաւոր թիւնովու կար, եւ եթէ չը լինէր իսկ, պարտաւոր էր իրա կանոնադրութեան 17րդ յօդուածի համաձայն ընդհ. ժողով գումարել եւ ընտրել նորը՝ պակաս անդամ տեղ:

Բ. Ապօրինի չէ՞ր գունձապահի հրաժարականը ընդունելը եւ վարչութեան միջից մի նոր անձամանակից գանձապահ ընտրելը, քանի որ այդ իրաւունքը՝ կանոնադրութեան 15րդ յօդուածի հիման վրայ ընդհանուր ժողովին է պատկանում:

Գ. Միթէ ապօրինի չէ՞ր Լիւաւայի աղջկայ դպրոցին յատկացրված 6,100 զոան փողից զեղչել 3,100 զոանը եւ միայն տալ 3,000 զոան: Եւ արդէն 6,100 զոան էլ, ինքնին շատ չնչին մի փող էր, նկատի ունենալով ընկերութեան 87,501 զոան գրամագրութիւնը եւ կանոնադրութեան 1 եւ 38րդ յօդուածները տրամադրութեամբ իրա վրա ծանրացած պարտականութիւնը: Այս զեղչը այն ժամանակ միայն իրաւացի էր քանաւոր կը լինէր, երբ ընկերութեան նիւթական միջոցները նուազէին. մինչդեռ ընդհանրապէս 1898—99 տարւոյ գրամագրութիւն վրա 30,688 զոան պատկանելի մի գումարէ աւելացել է ինչ բացարձակ թիւն առ այս կրկնութեան արդեօք վարչութիւնը մի նոր կանոնադրութեան է հպատակվում, որ կրթական գործը՝ իրա միակ նպատակը՝ անտես է անում, արհամարհում: Վարչութիւնը իրա այս վնասակար եւ անհետես քայլով, արդ-

եօք չէ հակասում կամ նոյնիսկ չէ ստում իրա սեղեկագրի 13 էջում գրած հետեւեալ սողերին, «սակայն կրթութեան կենսական գործը, որ ընկերութեան հիմնական նպատակն է, (սեղեկագրի ընթացողները, վարչութեան այս խոստովանութիւնը, եւ վերեւ յիշված գրկողութեան հետ բաղդատեցէք... ) կանգ չէ առնել (°) . այլ կատարել է աւելի լայն ընթացք (°) շնորհիւ ընկերութեան սովորու ու անխոնջ աշխատանքին»:

Մ Ի Ր Զ Ա

Մ Ա Ր Ժ Ո Ւ Ս Կ Ի Ի Զ Ա Մ Ի Ի Թ Ղ Թ Ա Կ Ի Ց Ի Ն

Ուշադրութեամբ կը կարգամ ձեր թղթակցութիւնները, ուր յաճախ անկողմնակալ ոգով կը պարզուին կարգ մը զեղծումներ:

Մեր կրօնականներու բազմաթիւ... հասարակութեան մէջ այնքան քիչ են պարտաճանաչները որ՝ մատի վրայ կը համարուին և բացառութիւն սեպել անգամ աւելորդ է: Ու երբ խօսքը Մեկքիսեղեկի մը՝ կամ անոր պաշտօնակից սեւագլուխ արարածի մը վրայ է, չեմ կասկած իր գրածնուդ ճշմարտութեան և քիչ կը գտնեմ անոնք. քանի որ ամէն յոռի ու աղզաղխա գործերու հեղինակները, քիչ բացառութեամբ, կրօնականները կը լլան միշտ: Իսկ Մեկքիսեղեկ մը ինչո՞վ յանցաւոր է, երբ մեր ժողովուրդը մտաւորապէս ու բարոյապէս այնքան ցած մակարդակի մը վրայ կը գտնուի որ, առանց անցեալէն օգտուելու, իր իսկ ձեռքով կը պարտատացնէ այդ կրօնը — որդերու պանդուխտ միշտ կը շատցնէ անոնց թիւը և առանց անոնց միջամտութեան

ինքզինք անկարող կը դառնալ ազգային գործ մը զլուխ հանելու. կրօնականներ կը սեմ, որոնք ժողովուրդային գանկին հետ քսակն ալ դատարկելու միայն կը ծառայեն: Եւ մի՛ զարմանաք, ժողովուրդին միամիտ գասակարգէն առաջ, կարգ մը... գրագէտ, յեղափոխականներ... անոնց քմահաճոյքին ծառայող թերթեր կը հիմնեն արտասահմանի պէս սզատա երկիրներու մէջ, անշուշտ իրարու գոյութիւն փոխադարձ պահպանելու նպատակով: Յորչափ առեն որ մեր ժողովուրդը շարունակէ այդ սեւագլուխ ցած հոգիներուն «փէշերը» համարուել, այնքան առեն ալ անոնք իր տածած յարգանքը, շեմբուան գութիւնը շարաշար պիտի գործածեն ու պատուհաններ դառնան մեզ... Զեր թղթակցութիւններուն ինչ ինչ կէտերու ճշմարտութեան համամիտ ըլլալ այս քանի մը տողերով յայտնել վերջ՝ անցնիմ գիտողութիւն մը ընել ձեզ:

— Եթէ անկեղծապէս պիտի խոստովանիմ, Մամուրեանի հասցէին ձեր ուղղած մէկէ աւելի քննադատութիւնները «անհամ» սեպուելու չափ առաջ գնացին. այն իսկ մանաւանդ Գեղեցիկեր 8 թուակիր նամակովիդ: Յորեւեարին հասցէին Պոլսոյ թերթերուն ըրած գովեստները, ու ձեր ալ անարգանքները իրարու հակոտնեայ են. միջին կէտը բռնել ամենէ ուղիղն է: Մամուրեան, որքան ալ իր ներկայով աննախանձելի ըլլայ ու մեր համակրութիւնը չի վայելէ — այս աւելի ձեր թղթակցութիւնն էն դատելով — ասոր հետ մէկտեղ չենք կրնար

ուրանալ իր անցեալը: Զեր հեղեանական ոճով ըսածը ես լուրջ պիտի հասկնամ. անուրանալի է որ ան իրօք մեծ ծառայութիւն ըրած է մեր տշխարհաբար գրականութեան, և այս բանին համար իրաւամբ արժանի է «գրական նահապետ» տիտղոսին, ինչպէս որ հեղեանաբար կը ըսէք դուք, և ուսուսահայ Պ. Պերճ Պոռչեանցը նոյնը կը հաստատէ լրջօրէն, ինչպէս նաև ուրիշ շատ մը ծանօթ գէտագէտ: Ուրիշ խնդիր է, եթէ Մամուրեան մեր գաղափարներուն հիմնովին հակառակ է: Զէ՞ք ընդունի թէ այդ նկատողութեան առնել շարժեր, երբ խորհիք թէ բնական օրէնք մըն է որ «հինը» նորին տեղի պիտի տայ, և այս գաղափարի տարբերութիւնը արդիւնք է ժամանակի յառաջացման: Գանի որ Մամուրեան ունեցած է իր փայլուն անցեալը ու լուսապէս ծառայած, ուրեմն ներկային մէջ հիմէ զինք չի գովենք զոնէ անարգելու, ծաղրելու չափ ալ անհամութեան չի տանինք խնդիրը: Եթէ յիշեալը թունդ յեղափոխական մը իսկ եղած ըլլար, ի՞նչ ծառայութիւն կը յուսայիք ըներ այն հանգամանքներուն ու միջավայրին ազդեցութեան տակ, և այն վիճակին մէջ՝ ուր արդէն մարմնով ու մտքով ձերացած է:

Առանց նկատողութեան առնելու թէ ի՞նչ շարժառիթներէ գրողուած կամ ի՞նչ կարգի անձերէ ծնունդ կառնէ յորեւեանի մը գաղափարը, սկզբունքով հակառակ եմ այն գաղափարին թէ՛ «յորեւեան» մը սարգել նպատակայարմար էր ժողովուրդին ներկայ անգոհացուցիչ կացութեան

ըր կը մեծնար: Գլխապտոյտ անկումի մը զգայութիւնը ունեցաւ, աչքերը վարկեանի մը չափ գոցեց, երբ գանոնք վերստին բացաւ, ի՞նչ հրաշք, վարդապեղ, խարտեաչ տղեկ մը նշմարեց, կարծ հագուստներ հագած, որ քարէ պատշգամին վրայ կանգնած էր, զէմքը ապակիին կպցուցած:

Տղան կը մըսէր. Գրօտիուս երկար բարակ չմտածեց երեւոյթին նորօրինակութեան վրայ. լուսամուտը բացաւ և նշան ըրաւ իր հիւրին ներս մտնել:

Ինչ մը յուզուած՝ իրաւ որ յուզուելու բան էր՝ բարի ծերունին իր կնճռոտ ճակատը դէպի փոքրիկը հակեց և իր քաղցր ձայնովը հարցուց.

— Ուրկէ՞ կուգաս, տղաս ո՞վ ես, ի՞նչ կուզես.

— Ընթարտութիւնն եմ ես, իմաստուն Գրօտիուս, երկիր կուգամ իմ հաւատարիմ ծառայ մեծարելու:

— Տէ՛ր Աստուած, յարեց ծերունին. արդեօք երեւակայութեան մը խաղաղութիւնն եմ, աչքերս յստակ կը տեսնեն. երազ մը չըլլայ, որ յոգնած ուղեգն կը յաճախէ, ճշմարտութիւնը, ճշմարտութիւնը, այս քնքոյշ ու անգոր մանուկը, որու ձայնը ականջիւ կը թոթովէ:

— Ընթարտութիւնն եմ ես, յաւիտենապէս երիտասարդ եւ յաւիտե-

նապէս ձեր, սկիզբն ու վախճանն եմ ես, ալֆան ու օմեգան: Տղան կրնայ զիս հասկնալ և ծերունին յաճախ ի գուր կը փնտէ զիս. Ես ամբիժ հոգիները կը յաճախեմ, բայց ծուռ սրտերը կը խորչին ինձմէ:

— Ընթարտութիւնն ես դուն, աղաղակեց նուաճուած ծերունին:

— Ընթարտութիւնն ու կեանքն եմ ես: Ով որ ինձի գայ, ով որ զիս հետապնդէ, և ով որ զիս գտնելով ինձի հետեւիլ ուզէ, միակ ճշմարտ բարեբիւն կը տիրանայ աշխարհի մէջ: Ընթարտութիւնն եմ ես, խաղաղութիւնն եմ ես. խաղաղութիւնը կուտամ ինձի ծառայողներուն: Իմ լուծու քաղցր է, իմ բեռս չի ճնշեր մարդոց ուսերուն վրայ: Եւ երբ իմ հաւատարիմ ծառայներս իրենց աշխատանքը լրացնեն՝ գեղեցիկ օրուան մը վերջը՝ ես կուգամ գանոնք վարձատրելու: Գրօտիուս դուն ինձի ամբողջ կեանքը նուիրեցիր, դուն ամբողջ եղար, պարկեղար, բարի եղար, ճշմարտասէր եղար: Գուն ինձի համար կուտեցար, դուն ինքզինքդ ամբողջովին նուիրեցիր, դուն՝ առաջ առանձին՝ քու ճշմարտութեան ծարաւը յաղեցուցիր, յետոյ, շուրջ քանի մը բարի կամքեր հաւաքեցիր: Ինչ ետքը դուք պատկառելի ամբոխը եղաք, որուն պատերազմի աղաղակը բերկրութեամբ

թնդաց: Սակայն տախտուութեան ու մոլորութեան երկրորդին պարեպոնները դու չեն ինկած և սրկաներու կատաղութեան ոտնոցները յաճախ խափանեցին ձեր ձայնը: Այսուամենայնիւ դու սիրտդ յուսահատութեան չմտանցիր, դուն դիտէիր, որ երկրի վրայ յարաբերական ճշմարտութիւն մը միայն կրնայ ըլլալ: Բացարձակ, յաւիտենական ճշմարտութիւնը, զոր դուն երիտասարդութենէդ ի վեր կը փնտես, պիտի ճանչնաս: Ան հասած է վարձատրութեան ժամը, Ե՛կ ինձի հետ այն աշխարհները, ուր ես կ'իջեմ, ուր ամէն գաղտնիք պարզուած է, ուր չկայ ծածուկ, ոչ ալ մութ բան մը: Կուզե՞ս հետեւիլ ինձի:

Մերունի գիտունը բերանը բացաւ, բայց անկէ ոչ մէկ ձայն չլուս: Ուրախութիւնը զինք կը զեղուր: Տարիքէն պրկուած ծուռկերը կ'ընց, հաւանութեան շարժում մը ուրուագծեց ու յանկարծ զգաց որ երանութիւն մը զինք ամբողջովին կը լեցնէր: Իրեն թուեցաւ թէ երթալով կը թեթեւար, ետքը բաց պատահանէն սլացաւ իր ուղեցոյցին ետեւէն, անհափելի խորութիւններու մէջ, ուր բոցավտտ արեգակները՝ հզօր ձեռքէ մը արձակուած՝ կը պտուտկին, ինչպէս ճամբաներուն փոշին հոտերու քայլերուն տակ: Անձրի սաստերով ծածկուած Մնունց

մը: Սպասուէի Մարիանը ամայի ծառուղիին երկայնքն ի վեր կարտորայ: Ան կը շտապէ իր տիրոջը ուրախ ծնունդ մաղթելու: Վեց յարկերը բարձրանալէ վերջ՝ պատու կինը վայրկեան մը կանգ կտանէ բնակարանին առջեւ:

Լապտերը գեռ կը վառի: Պարոնը կաշխատի գեռ Աստուած կընդունի՞. այս տարիքին գիշերը անցնելը... » պատուը կը ստկայ, կասկած չիկայ, կրակը մարած է և իր բարձաթոռին վրայ քնացած... »

Բայց յանկարծ աղմուկ մը: Սպասուէի Մարիանը սանդուղին աստիճաններէն չորս առ չորս գլորակելով վար կ'իջնայ. թեւերը երկինք վերցուցած: Ամէն ոք արսափահար մէկ կողմ կը քաշուի այս խենդին անցնելուն: Յետոյ տունը կրկին լուսութեան մէջ կ'իջնայ: Ու սպասուէի Մարիանը կը վերադառնայ, հետք բերելով, ոսկի ակնոցներով, լրջագէտ մարդ մը:

Փոքրիկ բնակարանին մէջ մարդը կը նստի և պաշտօնական ճակատով թերթի մը վրայ արագ ձեռքով կը գրէ:

Գրօտիուս իննսունըհինգ տարեկան, ցնորու:

Յր. Թարգմ. Կ

ատեն— թէ եւ թորքիոյ հայերուն մէջ անոր առաջ, ն անգամ երեւնալը ուրախութիւն է ։ Կայց Մամուրեան ինչո՞վ յանցաւոր է ։ Երբ ժողովուրդը, ինչպէս ամեն անտեղի բաներու մէջ՝ նոյնպէս և հիմա, իր համակրութեան միացուց իր նիհար քաակին լուսնանալ ։

Աերջին նամակնուդ այն մասերը՝ որոնք նորէն Մամուրեանի կը վերաբերէին, ամենէ աւելի ճշմարտութեան և սպիտակ գաղտնութեան զէմ գտայ, քանի որ զեւ իրականութիւն չի գտած բան մը, միայն բերնէ բերան լսելով, զրի առնելու ժամնուդաճատութիւնը բրած էր ։ Ինչ ապացոյց կայ թէ Մամուրեանի անարգանք մը ընելու համար հակառակորդի մը կողմէ շինուած սուտ մը չէ ։ ու դուք միամտութեամբ անտոյգ բանի մը ալ ձագանքը եղած էք թերեւս ։ Ձեզի կը ձայնակցիմ, եթէ իրեն լըր յարգանք ու երախտագիտութիւն եղող նուէր մը ծախելու չափանխորհուրդ ու ապերախտ քայլ մը առնէ Մամուրեան ։ Սակայն իրնդիրը առանց ստուգելու ։ Իրեն բերան խօսուած բան մը նիւթ ընել ու գրելն ալ զիտակից թըլթակցի մը ներքի չէ կարծեմ ։

ԲէնՁԱ.  
Ֆիլիպէ . 4 Յունվար

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վառնայաբնակ այրի տիկին Սարիամ Մինասեան, զոր մենք չենք ճանչնար, նամակով մը կիմացնէ թէ, մտտ օրերս հրապարակի վրայ «վերին թըրքական վայրագութիւններէ քլասուած տիկնոջ մը ինպատոհ վիճակահանութեան թուղթ կը պտտի, որուն վրայ պաշտօնական ոչ մէկ կնիք կայ ։ նամակագիրը իրաւամբ կը հետաքրքրուի իմանալ թէ, ո՞վ է այդ քլասուած տիկնոջը աւելի ազէկ կըլլար ճանչցուէր որպէսզի, իրենք ալ սրանց օգնէին այդ վիճակահանութեան ։

— Վառնայի ազգային երկսեռ վարժարաններու մէջ դաստիարակութեամբ են՝ Պ. Պ. Տօր. Ալ. Աթաբէկեան, Ատամյարոյժ Յ. Փափազեան, Մարտախանտեան և Վարդօ-Սրբախի ։ Գասախոսները ձրի պիտի կատարեն իրենց պաշտօնը ։

— Փրանսական «Էսթաբլիսմ» թերթի մէջ ֆրանսացի մը համակրանքով և զսովետով ի յոգուած մը գրած է երիտասարդ գերատան Պ. Գայֆահանի տաղանդի մասին ։ այդ յոգուածի պարունակութիւնը բոլորովին չի համապատասխաներ Պ. Գայֆահանի հայ քննադատներու գրածներուն ։

— «Թայմզ» թէ հրանի թղթակիցը Մէշէտէն հեռագիր մը

տալցած է, որով կը հազարգեն թէ՛ — Ռուսական հիւպատոսը — չը նայած օգերու վատութեան, Ալեսանէն գացած է ։ Մէշէտի հայերը նամակներ կտանան, որոնք կը հաստատեն թէ 30,000 զինուորներ Ռիֆիլդէն Ասիայութի վրայով անցած են Քուշք երթալու համար, Աֆղանիստանի և Երբիլն արքունիքի համար ։ Ռուսական ներկայացուցիչ նշանակուել է, և հայերը քաջալերուած են Աֆղանիստան մտնալ վաճառականութեամբ զբաղելու համար ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարիկեան թերթ մը կը ծանուցանէ թէ՛ Տամուր Մահմուտ վաշարի Փարիզ հասնելուն առթիւ որ իր մէկ տեսակցութեան մը ջոյնին յայտարարած է թէ երկու ամիսէն Պոլիս պիտի գտնուայ, ոտտիկանութեան կողմանէ կանչուած է երիտասարդ թուրքերուն զլլատորներէն Արիֆ պէյ և հարցումներ եղած է իր քաղաքական ուղղութեան մասին, զրգմամբ Փարիզի դեսպան Միւնիք պէյի ։

Արիֆ պէյ Սուլթան Համիտի զոհերէն մին է, 1877 յուլիս 28ին պաշտական մի լրտեսի տեղեկագրին վրայ 80 թիւք երիտասարդներ ձերբակալուած և մասնաւոր գատարանի մը կողմանէ առանց երկար դատաւանի դատապարտած են մշտնջենական բերդարգելութեան ։ Աստուցմէ եղած է նաեւ Արիֆ պէյ, որ իր ընկերներուն հետ պապը Ձապթիյէի բանտին մէջ երկարատեն շարաշար տանջանքներ կրելէ յետոյ օր մըն ալ յանկարծ կառավարական «Նէրիֆ» շոգեանուով Արիֆիկան Տրիպոլիս արտարած և բերդի մը մէջ բանտարկուած են զազանաբարոյալպանացիներու հսկողութեան ներքեւ ։

Արիֆ պէյ Սէմէնի կուսակալին օրդին եղած է, մէկ տարուան բերդարգելութենէ վերջ, օր մը կը յաջօրի իր պահապաններուն հսկողութենէն պրծի և նետուել նաակ մը ու 36 ժամ վոթորկալից օգով տաժանելի ճամբորդութենէ մը յետոյ հասնիլ Թունուզ և ապա անցնիլ Փարիզ ուր կը միանայ երիտասարդ-թուրքերու խումբին ։

Մահմուտ վաշարի վախուստին առթիւ յարուցուած աղմուկի միջոցին, Արիֆ պէյ ոչ միայն ոտտիկանութենէն կը կանչուի, հապա նաեւ կը ներկայանայ ընդհանուր ազատութեան պետին որ կը հրաւիրէ զինքը Փարիզէն մեկնիլ ։ Արիֆ պէյ կը պատասխանէ թէ՛ առանց արտաքրման հրամանագրի չպիտի ձգէ Փարիզը և կըսպասէ անոր ու կը գառնայ իր տունը ։ Հրամանագիրը դեռ չէ եկած

և Միւնիք պէյ տակաւին կաշխատի ։

— Անգլիական եկեղեցւոյ մէկ քանի եպիսկոպոսներ պատուիրած են իրենց հովուութեան ներքեւ գտնուող եկեղեցականներուն որ ազգութենէն ընեն անգլիական բանակին յաջողութեան համար Թրանսպարի պատերազմին առթիւ ։ Քարշիլի հովիւ Զ. Քէնըտի մերժած է այդ ազգութենէն ընել, հրապարակալայտարարելով թէ «ինչպէ՞ս Աստուծոյ ներկայացուցիչ մը եղելու թիւնները գիտնալով հանդերձ, կրնայ ազգութիւն ազգութիւն ալ սարգասպանութեան և աւաղակութեան գործի մը համար, որ պարզապէս անարգ արշաւանք մըն է և իրատուքի բռնաբարում մը ։ Այս պատերազմը, կըսէ, զբաժանէր ներքեւ գործն է և իրենց նպատակն է զօղնալ օսկիի հանքերը ու կայսրութիւն մը հաստատել ։ Այսքան անագորոյն ձեռնարկի մը համար, պէտքէ դիմել աւելի ստատաններուն քան Սասո՛ժոյ, և ես իմ մասին կը մերժեմ այդ գիմումը ընել ։»

Ինչ կը մտածէ արդեօք Քէնըտի հովիւ Սուլթան Համիտի մասին, որ կը հրամայէ շարաշար խողովել հայերը, և այդ հայաժողովներուն ու նահատակուածներուն պետին նկատմամբ որ իրեն նման սինլորո հետեւողներովը ամէն օր կազմեն այդ «կարմիր Մարդասպանին» երկարակեցութեան համար ։

— Պոլսէն կը ծանուցանեն թէ ֆրանսական թղթատարական վարչութեան պաշտօննաներէն մին թուրքին կողմանէ վարձեալ լրտես մը ըլլալով, ամէն նամակ և ծրար կը բանայ և կը տեղեկագրէ եզեր սու որ անկէ ։ Այս պատճառաւ արդէն Պոլսոյ ֆրանսացիները բողոքելով հանդերձ սկսած են իրենց յարաբերութիւնները անգլիական և սուլտարական թղթատարութեան միջոցաւ կատարել ։ և մենք ալ մեր կողմանէ կը զգուշացնենք հաստակութիւնը ։

— Պ. Բիւնա Քիլիսա «Օրօր» թէ՛ հրատարակած է՝ որ Սուլթանը կը պատրաստուի երկրորդ հարուածը ալ իրեն, զինքը գատի ենթարկելով երկրորդ անգամ ։ «Թէպիւ Էրօպիէն» թէ՛ հրատարակած յօդուածին համար ։

Թիւրք զեպանին բողոքագրին կարեւոր մասն հետեւեալն է ։

«Հեղինալը, որուն զէմ ձեզի բողոքելու պատուը ունեցայ, «Օրօր» թերթին մէջ հրատարակած յօդուածին համար, չը վախնար, նորէն այս նոր գործին մէջ անուանել իմ օգոստոսիառտէրս . . . «Կարմիր Սուլթան, Կարմիր Գազան, Մարդասպան, Գերագոյն Չարաշարիչ» և իր հպա-

տակներուն ու զինուորական պաշտօններուն բու մէկ մասին յանցանքները անոր վերագրել ։

— Թրանսպարի ետեւոր յուրեմ չկան, Անգլիացիները փոքրիկ յաջողութիւններ ունին, զժուարին գործ մըն ալ կատարեց մէկնեալ Պոլսէր, թիւթեալ գեաը անցնելով ։ Մեծ ճակատամարտ մը կապտուէր քանի մը օր սուալ, բայց դեռ յայտնի չէ թէ, այդ ճակատամարտը անպիտանեցա՞ւ թէ ոչ ։

ԳՆԵՋՐԱՏՈՒՆ ՍԱՆԹՐԱԼ  
Տ ։ ԹԻԻՖԷՆԿՆԱՆՆԻ

Մուսաղլաի Թաղայեկական պարտիզի գիւնաց, նախկին Անկի Մլալօֆը

Պատիւ ունիմ ծանուցանելու Արգոյ հասարակութեան թէ՛ այս անգամ մեծաւ պատրաստութեամբ բացած եմ սոյն գարեջրանուէրը, յուսով եմ թէ չը պիտի զլանալ պատուարժան հասարակութիւնը զիս քաջալերել ։

ԹԱՏՐՈՆ «ՍՍՆԹՐԱԼ»

«Վէսէլլօ» հայ թատերական խումբը, այս գիշեր, Բունդար 15, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ «Ձիւնացի Օրօր» զոհեր արամ-գօմէտի 4 արար ։ Խիստ ծիծաղաշարժ զուեշտ մը ։

Վաղր կիրակի գիշեր, Յուլիս 16, առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ՝ Խորհրդաւոր կտակը արամ-գօմէտի 4 արար ։

Խիստ ծիծաղաշարժ զուեշտ մը ։ Տ. Արշակ և ՏԿ. Քնար Սփանճեան իրենց վերջին հիւանդութենէն ապաքինած ըլլալով սոյն ներկայացմանց պիտի մասնակցին ։

ՊՕՐՍԱ

Վառնա 14 Յունվար

Վառնա	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՅ	53-57	9.50-10.60
ՄԻՍԻՐ	54-56	5.90-6.20
ԱՐՔԱ	—	—
ԵՈՒՂԱՅ	—	—
ՖԱՍՈՒԼԵԱ	—	—
ՏԱՐԸ	—	—
Առապա	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՅ	55-60	9.50-11.20
ԱՐՔԱ	38-44	6.50-7.40
ԵՈՒՂԱՅ	35-36	5.20-5.30
ՄԻՍԻՐ	55-57	6-7
ՏԱՐԸ	55-58	5.50-6.00
ՖԱՍՈՒԼԵԱ	100 Վրո	12-20

Չէր կիւն կէլէն մալ

ՊՈՒՂՏԱՅ	—	առապա
ԱՐՔԱ	—	»
ԵՈՒՂԱՅ	—	»
ՖԱՍՈՒԼԵԱ	—	»
ՄԻՍԻՐ	—	»
ՏԱՐԸ	—	»

Առապա մուսաղլաի նարոյէն 22.40 ֆրանք հիսապը իլէ տիր ։